

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

20.04.2018

Ք. Իջևան

Մասնակցում էին գիտխորհրդի 21 անդամներից 19-ը

ՕՐԱԿԱՐԳ

1. Առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում:
/Ձեկուցող՝ Վ. Աղաբաբյան/
2. Նախապաշտպանությունների արդյունքների ամփոփում: /Ձեկուցող՝ Կ. Պողոսյան/
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցողը ներկայացրեց 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքները: Ձեկուցողը նշեց, որ երկրորդ կիսամյակում ավարտական կուրսի ուսանողները չունեն ընթացիկ քննություններ և ստուգումներ (Ըստ ուսումնական պլանի՝ 8-րդ կիսամյակում նախատեսվում են միայն հանրագումարային քննություններ): Նա նշեց, որ 1-ից 3-րդ կուրսերում քննաշրջանը կազմակերպված էր պատշաճ կերպով, քննություններն ու ստուգումները իրականացվել են ժամանակացույցին համաձայն: Շեշտվեց, որ ֆակուլտետի դասախոսները նկատելիորեն կատարելագործել են թեստերը: Ուսանողների կողմից հարցաշարերի հետ կապված խնդիրները լուծվել են ժամանակին, և տարաձայնություններ չեն եղել:

Ձեկուցողը մանրամասն ներկայացրեց ֆակուլտետում երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների ավարտին արձանագրված ակադեմիական պատկերը.

«Պատմություն» մասնագիտության 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում ընթացիկ քննությունների միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.76

վճարովի և 3.44 անվճար համակարգում, իսկ ընթացիկ ստուգումների միջին գնահատականը՝ վճարովի համակարգում 7.07, իսկ անվճարում՝ 9.05 միավոր:

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում ընթացիկ քննությունների և ստուգումների միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 3.87 վճարովի և 4.80 անվճար համակարգում, իսկ ընթացիկ ստուգումների միջին գնահատականը՝ վճարովի համակարգում «8.69, իսկ անվճարում՝ 9.80 միավոր:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում ընթացիկ քննությունների և ստուգումների միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.86 վճարովի և 4.80 անվճար համակարգում, իսկ ընթացիկ ստուգումների միջին գնահատականը՝ վճարովի համակարգում 6.17, իսկ անվճարում՝ 8.27 միավոր:

«Օտար լեզու և գրականություն» մասնագիտության 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում ընթացիկ քննությունների միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 3.06 միավոր վճարովի և 3.98 անվճար համակարգում, իսկ ընթացիկ ստուգումների միջին գնահատականը՝ վճարովի համակարգում 7.55, իսկ անվճարում՝ 8.57 միավոր:

2018-2019 ուստարվա առաջին քննաշրջանի արդյունքներով ֆակուլտետի միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 3.10 վճարովի և 3.88 անվճար համակարգում, իսկ ընթացիկ ստուգումների միջին գնահատականը՝ վճարովի համակարգում 6.63, իսկ անվճարում՝ 8.65 միավոր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը, Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, Կ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, Կ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

- 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցողը մանրամասն ներկայացրեց ավարտական աշխատանքների կատարման ընթացքը և նախապաշտպանությունների արդյունքները: Չեկուցողը նշեց, որ նախապաշտպանությունների ժամանակ որոշ աշխատանքներում ուսանողներն ունեցել «են խնդիրներ և դժվարություններ: Նկատված թերությունները հնարավոր միջոցներով շտկվել և վերացվել են:

«Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտությունից ավարտական աշխատանք է գրում 26 ուսանող, իսկ ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտությամբ՝ 5 ուսանող: Ըստ զեկուցողի հաղորդման՝ ուսանողների գերակշիռ մասը կատարել է աշխատանքի 50-60%-ը:

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությունից ավարտական աշխատանք է գրում 15 ուսանող: Ուսանողների ճնշող մասը կատարել է աշխատանքի 70%-ը:

«Հոգեբանություն» մասնագիտությունից ավարտական աշխատանք է գրում 11 ուսանող: Ուսանողների մեծ մասը հասցրել է կատարել տեսական գրականության վերլուծություն և շարադրում: Ինչպես նաև կատարել են հետազոտական մեթոդների հավաքագրում, համակազմի ընտրություն, արդյունքների քանակական վերլուծություն: Նրանք գտնվում են վերջնական վերլուծությունների և եզրակացությունների շարադրման փուլում:

«Պատմություն» մասնագիտությունից ավարտական աշխատանք է գրում 17 ուսանող: Ուսանողների մեծ մասը ժամանակին հայթայթել է անհրաժեշտ գրականությունը, ճշտել աշխատանքի կառուցվածքը և այժմ շարադրանքի փուլում է:

Մասնակի բացառություններով ավարտական աշխատանքների կատարման ընթացքը բավարար է: Անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում ունենալ այն ուսանողներին, ովքեր դեռևս բավարար աշխատանք չեն կատարել, հանդիպել նրանց գիտական ղեկավարներին, հարկ եղած դեպքում այս գործում ներգրավել նաև ամբիոնի այլ դասախոսների:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, հ.գ.թ., դոցենտ Լ. Սարգսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2018-19 ուստարվա ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը համարել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ՔԱՐՏՈՒՂԱՐ

Կ. Պողոսյան
Վ. Աղաբաբյան